ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2021 թվականի №--Ա
ք. Երևան

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի դեկտեմբերի 14-ի №2/9-100 և ի լրումն դեկտեմբերի 28-ի №2/9-105 գրություններով դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանում գտնվող 4TDTH 16000/110 տիպի №4 տրանսֆորմատորը, շահագործման մեջ գտնվելով շուրջ 76 տարի, 2012 թվականին դուրս է գրվել Ընկերության հաշվեկշռից: Հաշվի առնելով, որ պիտանի չլինելու պատճառով այն չի մասնակցում Ընկերության լիցենզավորված գործունեությանը և դրա պահպանումն այլևս նպատակահարմար չէ, Ընկերությունը խնդրել է տալ համաձայնություն իրեն սեփականության իրավունքով պատկանող «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանում գտնվող 4TDTH 16000/110 տիպի №4 տրանսֆորմատորի ապամոնտաժման արդյունքում առաջացած մետաղների ջարդոնը «ՖԿՍ» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու պայմանագիր (այսուհետ՝ Գործարք) կնքելուն,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի դեկտեմբերի 28-ի №ԳԲ/34.1-Մ2-2/5131-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի հունվարի 21-ի №02/12.8/1396-2021 գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի, ինչպես նաև «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, իսկ ձեռքբերողի՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող և անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող՝ «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանում գտնվող 4TDTH 16000/110 տիպի №4 տրանսֆորմատորը (տրանսֆորմատորի ապամոնտաժման արդյունքում առաջացած մետաղների ջարդոնը) «ՖԿՍ» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառելու գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Ընկերությունն իրավասու է այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- փետրվարի 2021թ.